Հայրապետն՝ այդ իմանալով՝ ժամանակին հեռացաւ այնտեղից և առաւ Ս. Աջը գնաց Աղթամար։ Այս եղաւ 1462 թուի տարեմտին Դաւասարդի 16-ին Ս. Յակոբայ պասի ուրբաթ օրը. այդ օրից Աղթամարու Ս. Խաչ վանքը դառաւ ժողովրդի համար մի նորանշան ուխտատեղի՝ բազմութեամբ գալիս էին ընծաներով՝ մատաղներով համբուրում էին Ս. Աջը և առնում էին հայրապետի օրհնութիւնը։ * Ժողովուրդն էլ շատ գոհ էր և օրհնում էր Զաքարիա կաթուղիկոսին՝ «ուրախացեալ բերկրեցան յաստուածատուր պարգևացն և շնորհացն՝ որ տուաւ ի սուրբ Աջէն Լուսաւորչի՝ և ամենայն ոք օրհնէր զԱրարիչն Աստուած և զտէր Զաքարիայ կաթուղիկոսն՝ որ արժանացոյց տեսլեան Ս. Աջոյ Լուսաւորչին։» ** Այդ ուրախութիւնը միանգամայն հոգևոր էր և բարոյական՝ ժողովուրդն ինքը տառապանաց և նեղութեան մէջ էր ամէն տեղ։ 1461 թուի յիշատակարաններից մէկի մէջ գրիչը շատ ծանր է համարում ժամանակի դառնութիւնը. «վասն անբարի և տառն ժամանակիս՝ յորում եմք՝ չէ բնաւ կարողութիւն պատմել կամ ընդ գրով արկանել. յորում ժամանակի նեղեն ազգն քրիստոնէից երեքալեան թշուառութեամբ։» ***

* Առ. Դաւթ. Լ.

** Նստ. Հ. 208.

*** Նոյն 206.